

Զ Ե Կ Ո Յ Ց

6 Ապրիլ, 1982

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Բարեխնամ Պատրիարք Առաքելական Ս. Աթոռոյս

եւ Նախագահ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ

Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովը, իր երէկուան՝ 5 Ապրիլ 1982ի նիստին մէջ քննութեան ենթարկելով Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի Ձերդ Ամենապատուութեան նկատմամբ ցուցաբերած անարգալից ընթացքը, որուն համար գրաւոր կերպով բողոք ենդկայացուցած էին տասնհինգ Միաբաններ, ինչպէս նաեւ Ժողովի մէջ Շահէ Սրբազանին դէմ եղած զանազան արտայայտութիւններ, միաձայնութեամբ (ծեռնապահութեամբ մէկ անդամի) որոշեց դուրս հանել վերոյիշեալը Միաբանութեան շարքէն:

Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանը կը հաղորդէ սոյն որոշումը Ձերդ Ամենապատուութեան:

Մնալով խոնարհ աղօթակիցք՝

Ատենադպիր

Ատենապետ

ԱՍՊԵՏ ՎՐԴ.

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ.

Պատկառելի Միաբանական Ընդհանուր Ժողովի որոշումը Գերշ. Տ. Շահէ Արքեպս.ի Միաբանութենէն արտաքսման մասին, մեկնութեան չի կարօտիր: Առանց մանրամասնութիւններու երթալու, իրեն հակիրճ լուսաբանութիւն, հետաքրքրուողներուն կը յայտնենք թէ Շահէ Սրբազանը իր տարիներէ ի վեր ետանձնած պաշտօններուն մէջ — Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութիւն, Կալուածոց Տեսչութիւն եւ Դիւանապետութիւն, իր անփոյթ եւ անուղիղ ընթացքով, զայրոյթի եւ կասկածի տարած էր ամբողջ Միաբանութիւնը: Իր դէմ եղած ցասումը յորդեցաւ Միաբանութեան կողմէ, երբ անպատկառ բառերով անարգեց Ս. Աթոռոյս Ամենապատիւ Սրբ. Պատրիարք Հայրը Պատրիարքարանի մէջ:

ԴԻՒԱՆ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

Ատենադպիր

Ատենապետ

ՍԵՒԱՆ ՎՐԴ.

ԿԻՒՐԵՂ ԵՊՍ.